ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**
   Քրիստինա Ումրշտյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի վարչության էներգետիկ տարածաշրջանային շուկաների բաժնի գլխավոր մասնագետ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ**
   Բելգիայի Թագավորություն, ք.Բրյուսել, 2026 թ.հունիսի 9-ից 10-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
   ԵՄ «EU4Energy» էներգետիկ կարգավորողների եվրոպական խորհուրդ (CEER):

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**
   Մասնակցություն ԵՄ-ն հանուն էներգետիկայի (EU4Energy) ծրագրի շրջանակներում «Regional Training on Unlocking Flexibility for a Clean Energy Future» թեմայով աշխատաժողովին:

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**
   ԵՄ քաղաքականության հեռանկարը և ճկունության անհրաժեշտությունը, ճկունության համար կարգավորող շրջանակ, բաշխիչ ցանցերի մակարդակում ոչ բրածո վառելիքի ճկունության խոչընդոտները, ցանցային կոդ պահանջարկի արձագանքման համար, տեղական ճկուն շուկաներ, շուկայի դիզայնի լուծումներ, Էներգիայի կուտակումը և համատեղ տեղակայումը էլեկտրաէներգիայի շուկաներում, Էլեկտրաէներգիայի շուկայի նախագծման շրջանակներում ճկունության կարիքների գնահատում, ճկուն միացման համաձայնագրեր և սակագներ, որոնք հնարավորություն են տալիս ապահովել ճկունությունը:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**
   Երկօրյա ինտերակտիվ ուսուցողական դասընթացը կենտրոնացել էր էներգետիկ համակարգի ճկունության խթանման վրա՝ որպես Արևելյան գործընկերության երկրներում մաքուր էներգիայի անցման հիմնական խթանիչ: Նախատեսված լինելով կարգավորող մարմինների և էներգետիկայի փորձագետների համար, այն հստակ պատկերացում էր տալիս ԵՄ քաղաքականության շարժիչ ուժերի և վերականգնվող էներգիայի ավելի մեծ մասնաբաժիններ ինտեգրելու համար անհրաժեշտ զարգացող կարգավորիչ շրջանակների մասին: Մասնագիտական ներկայացումների և գործնական ուսումնասիրությունների համադրության միջոցով ուսումնասիրվեցին հիմնական թեմաներ, ինչպիսիք են ոչ բրածո էներգիայի ճկունության կարիքները, շուկայի

դիզայնի լուծումները, պահանջարկի արձագանքման և ագրեգացման մոդելները, ինչպես նաև դինամիկ գնագոյացման և բնակելի նոր ճկունության աղբյուրների դերը: Միջոցառման շրջանակներում հարցազրույցի միջոցով հայաստանյան կողմը պատասխանեց մի շարք հարցերի:

8. **ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

Ներկայացվեցին հետագա համագործակցության ուղղությունները և անցումային ժամանակաշրջանի մարտահրավերները (միջազգային համագործակցության ընդլայնում, ենթակառուցվածքների ուժեղացում, ճգնաժամային կառավարում և համախմբվածություն, ստանդարտներ, պահեստավորում և սպառողների պաշտպանվածություն, այլ հարցեր):

9. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Կազմակերպիչների կողմից ընդգծվել է կարևորությունը՝ նմանատիպ դասընթացներից հետո մասնակիցների միջև գործնական շփումների, փորձի փոխանակման և ձեռք բերված գիտելիքների գործնականում կիրառման:

ՀՀ ՏԿԵ նախարարության էներգետիկայի վարչության էներգետիկ տարածաշրջանային շուկաների բաժնի գլխավոր մասնագետ Ք. Ումրշատյան